

## **Գաղտնիության քաղաքականություն**

Գաղտնիության սույն քաղաքականությունը սահմանում է դեղերի կողմնակի ազդեցությունների հաղորդման համակարգի և Med Safety հավելվածի միջոցով օգտատերերի անձնական տվյալների հավաքագրման, մշակման և պաշտպանության կարգը:

Սույն քաղաքականությամբ ներկայացվում է անձնական տվյալների կարևորությունը և պարզաբանվում են Ձեր իրավունքները, որոնք սահմանված են “Անձնական տվյալների պաշտպանության մասին” ՀՀ օրենքով:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ մենք պատասխանատվություն չենք կրում այս կայքի հղումների միջոցով հասանելի որևէ արտաքին այլ կայքի տեղեկատվության բովանդակության համար: Արտաքին կայքերը սահմանում են գաղտնիության իրենց սեփական քաղաքականությունը, որին դուք ևս պետք է ծանոթանաք:

### **Մեր մասին**

ՀՀ առողջապահության նախարարության Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնը (Կենտրոնը) իրավասու է ստանալ և մշակել անձնական տվյալներ:

### **Ինչու՞ է մեզ անհրաժեշտ Ձեր կողմից ներկայացված տեղեկատվությունը**

Կենտրոնը, գործելով ՀՀ առողջապահության նախարարության անունից, նպատակ ունի պահպանել և խթանել հանրային առողջությունն ու պացիենտների անվտանգությունը՝ ապահովելով դեղերի անվտանգ կիրառումը և դրանց համապատասխանությունը անվտանգության, որակի, կատարողականի և արդյունավետության ստանդարտներին:

Դեղերի կողմնակի ազդեցությունների հաղորդման համակարգը թույլ է տալիս Կենտրոնին վերահսկել դեղերի անվտանգությունը Հայաստանում՝ պացիենտների և այլ օգտագործողների համար դրանց սահմանված անվտանգությունն ապահովելու նպատակով: Դուք աջակցում եք այս գործընթացին՝ մեզ տեղեկացնելով դեղերի կողմնակի ազդեցությունների առաջացման կասկածի մասին:

Դեղերի կողմնակի ազդեցությունների մասին տեղեկություն ուղարկելու համար մենք պահանջում ենք որոշ անձնական տվյալներ, մասնավորապես՝ հայտը ներկայացնողի անունը և կոնտակտային տվյալները՝ լրացուցիչ տեղեկատվության անհրաժեշտության դեպքում կապ հաստատելու համար: Տարբեր պոպուլյացիաների վրա ազդեցությունը հասկանալու համար մեզ անհրաժեշտ են նաև դեղի կողմնակի ազդեցությանը ենթարկված անձի առողջության և ժողովրդագրական մանրամասները (օրինակ՝ տարիքը, սեռը, էթնիկ պատկանելիությունը և այլն):

Մենք հավաստում ենք Ձեր կողմից ներկայացված տեղեկատվության անվտանգ, ապահով և գաղտնի պահպանումը: Ձեր անձնական տվյալները, առանց Ձեր համաձայնության, հասանելի չեն լինի Կենտրոնից դուրս այլ անձի՝ բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Եթե չեք ցանկանում կասկածելի կողմնակի ազդեցության մասին հաղորդումն ուղարկել Ձեր անունից, կարող եք դա անել այլ անձի միջոցով:

### **Անձնական ինչ տվյալներ ենք հավաքագրում**

#### Երբ Դուք գրանցվում եք որպես օգտատեր

Med Safety հավելվածում գրանցվելու համար Դուք կարող եք օգտագործել Ձեր անունը և կոնտակտային տվյալները, սակայն գրանցումը պարտադիր չէ: Այս տեղեկությունները պահանջվում են Ձեր հարմարության համար, քանի որ գրանցվելով մեկ անգամ, Դուք հնարավորություն եք ստանում ուղարկել բազմաթիվ հաղորդումներ՝ առանց Ձեր տվյալները բազմակի մուտքագրելու անհրաժեշտության: Մեկ անգամ գրանցվելով՝ Դուք կարող եք նաև դիտել ուղարկված նախորդ հաղորդումները:

Կենտրոնը կարող է կապ հաստատել գրանցված օգտատերերի հետ դեղերի կողմնակի ազդեցությունների կամ ձեր կողմից օգտագործված ծառայությունների վերաբերյալ: Մենք հավաստում ենք, որ Ձեր անձնական տվյալները չեն փոխանցվի այլ կազմակերպությունների՝ առևտրային կամ այլ ուրիշ նպատակներով օգտագործելու համար, բացառությամբ սույն քաղաքականությամբ նախատեսված դեպքերի:

#### Երբ Դուք հաղորդում եք դեղերի կողմնակի ազդեցություններ

Մենք խրախուսում ենք կողմնակի ազդեցության ենթարկված անձանց, նրանց ընկերների և ազգականների, առողջապահության ոլորտի մասնագետների կամ

արտադրողների կողմից հաղորդումները: Ցանկացած անձ կարող է հաղորդումն ուղարկել իր կամ մեկ այլ անձի անունից:

Մենք տվյալներ ենք հավաքագրում և՛ հաղորդումն ուղարկողի, և՛ կողմնակի ազդեցության ենթարկված անձի վերաբերյալ: Տվյալները համընկնում են, երբ Դուք հաղորդում եք Ձեր մասին:

Հաղորդումն ուղարկողի մասին մեզ անհրաժեշտ են հետևյալ տվյալները՝

1. Անունը և ազգանունը,
2. Կոնտակտային տվյալները՝ Էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը,
3. Զբաղեցրած պաշտոնը և կազմակերպության մանրամասները, եթե հաղորդում ուղարկողը առողջապահության ոլորտի մասնագետ է կամ արտադրողի ներկայացուցիչ,
4. IP հասցեն:

Մենք հավաքագրում ենք կողմնակի ազդեցության ենթարկված անձի վերաբերյալ անձնական և հատուկ բնույթի հետևյալ տեղեկատվությունը՝

- հետևյալ բնութագրիչներից առնվազն մեկը՝ անվան սկզբնատառերը, տարիքը, սեռը, քաշը, հասակը,
- Էթնիկ պատկանելիությունը (պարտադիր չէ),
- կասկածելի ապրանքի վերաբերյալ տեղեկատվությունը և կողմնակի ազդեցության նկարագրությունը,
- առողջության վերաբերյալ տվյալները, այդ թվում՝ հիվանդության պատմությունը և ընդունվող դեղերը:

### **Իրավական հիմքերը**

Ձեր անձնական տվյալները մշակելիս մենք առաջնորդվում ենք “Դեղերի մասին” և “Անձնական տվյալների պաշտպանության մասին” ՀՀ օրենքների համաձայն:

### **Տվյալների պահումը և հեռացումը**

Մենք Ձեր անձնական տվյալները պահում ենք միայն այնքան ժամանակ, որքան պահանջում է դրանց հավաքագրման նպատակը, այդ թվում՝ հաղորդումն իրականացնելը և իրավական պահանջները:

## **Ձեր կողմից ներկայացված տեղեկության տարածումը**

### Դեղերի կողմնակի ազդեցությունների վերաբերյալ հաղորդումներ

Այս տեղեկատվությունը, առանց նույնականացնող տվյալների, հասանելի կլինի Առողջապահության համաշխարհային կազմակերպության Ուսասալայի մշտադիտարկման կենտրոնի և դեղագործական ընկերությունների համար: Ձեր պահանջի դեպքում՝ հաղորդման պատճենը կուղարկվի նաև Ձեր բժշկին:

## **Ձեր տեղեկատվության բացահայտումը**

Դեղերի կողմնակի ազդեցությունների վերաբերյալ հաղորդումների տվյալները կարող են պահանջվել ՀՀ օրենսդրության համաձայն: Իրավական տեսանկյունից մենք պարտավոր ենք տրամադրել պահանջվող տեղեկատվությունը:

## **Փոփոխություններ մեր քաղաքականությունում**

Կենտրոնը իրավունք ունի թարմացնել և բարելավել սույն քաղաքականությունը՝ անձնական տվյալների վերաբերյալ նոր օրենսդրության հետ այն համաձայնեցնելու համար: Մենք կտեղեկացնենք Ձեզ այդ փոփոխությունների մասին, եթե վստահ լինենք, որ դրանք կազդեն Ձեր իրավունքների վրա կամ այդ փոփոխությունների արդյունքում ի հայտ կգան անձնական տվյալների մշակման նոր նպատակներ:

## **Կապը մեզ հետ**

Եթե Դուք որևէ հարց ունեք սույն քաղաքականության, համակարգից օգտվելու կամ համակարգում Ձեր գործողությունների վերաբերյալ, խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ Էլեկտրոնային փոստի հետևյալ հասցեով. [vigilance@pharm.am](mailto:vigilance@pharm.am):